



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

20

12

320  
17-31

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

№ 20

№ 20

Պատասխանը բոլոր երկրների, միացե՛ք.

ՎԱՀԱՆ ՏԵՐԵԱՆ

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ԼԵՆԻՆԸ

ԳԻՒՂԱՑԻՆԵՐԻՆ

~~320~~  
~~17-31~~

ԵՐԿՐՈՐԴ ԲԱՐԵՓՈՒԽԱԾ ՏՐԱՏԱՐԱՎՈՒԹԻՒՆ

В. ТЕРИАН.—„Что говорит Ленин крестьянам“

Գինը՝ 1 ռ. 25 կոպ.

320  
17-31  
3420

493

48

321 : 92 (2 to)

UMr

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՌՍԱԿՑՈՒԹԻՒՆ

№ 20

№ 20

Պրոլետարնե՛ր բոլոր երկրների, միացէ՛ր.

ՎԱՀԱՆ ՏԵՐԵԱՆ

ԻՆՉ Է ԱՍՈՒՄԻ ԼԵՆԻՆԸ



ԳԻՒՂԱՑՄԱՆ ԵՐԻՒՆ

ԵՐԿՐՈՐԴ ԲԱՐԵՓՈՒԽԻՄՆ ՇՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՌՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Մոսկուա—1919

Handwritten notes in purple ink, including '1920' and other illegible characters.

I. \*)

Լենինի անունն անշուշտ լսած կաս ընթերցող: Եւ դա դարձմանալի չէ—այժմ Ռուսաստանում դժւար է գտնել այն աշխարհից բերաբարին, որ Լենինի մասին լսած չլինի: Չարմանալի չի լինի եթէ դու ասես, որ լսել ես թէ Լենինն ու բոլշևիկներն անաբխատներ են (այսինքն անիշխանականներ), աւաղակներ, կամ դերմանական լրտեսներ, որ ուզում են Ռուսաստանը կործանել:

Ասում եմ դարձմանալի չի լինի, որովհետեւ գիտեմ, որ ամեն տեղ թէ բերանացի, թէ իրանց դադէթների միջոցով այնպիսի անամօթ ու անխիղճ ստեր Լենինի ու բոլշևիկների մասին տարածում են հասարակ ժողովրդի, զիւղացու և բանւորի ոխերիմ թշնամիները՝ փողատէրերն ու հողատէրերը:

Բայց պատճառն ի՞նչ է, որ հողատէրերն ու փողատէրերը կամ նրանց շահեր պաշտպանողներն այդպիսի սուտ ու սխալ, այդպիսի անխիղճ ու անամօթ զրոյցներ են հնարում բոլշևիկների, կոմմունիստական կուսակցութեան և այդ կուսակցութեան պարագլուխ Լենինի մասին տարածում են ժողովրդի մէջ: Աւելի ճիշտ կլինէր ասել ի՞նչ նպատակով են տարածում այդ լուրերը փողատէրերն ու հողատէրերը: Եթէ դու չես ուզում ընթերցող, նմանել նրանց, որոնք, չգիտեմ

\*) Այս յօդուածը կազմելիս մենք առջի առաջ ենք ունեցել Լենինի յօդածներն ու մանաւանդ այն ծառը, որ արտասանել է Լենինը 1917 թ. մայիսի 22-ին Գիւղական Պատգամաւորների Խորհրդում:



48 - Ա 9-Դ

խելքի պակասութիւնից, թէ խղնի պակասութիւնից լսում են այդ սուտ ու փուտ զրոյները, որ հնարում ու տարածում են ժողովրդի թշնամիները, բոլշևիկ-կոմմունիստների և նրանց առաջնորդ Լենինի մասին—պէտք է իմանաս, թէ ո՞վ են բոլշևիկները կամ ո՞վ է Լենինը և ի՞նչ են ասում և ուզում նրանք:

«Բոլշևիկները» կուսակցութեան իսկական անունն է «Ռուսաստանի Կոմմունիստական Կուսակցութիւն (բոլշևիկների, այսինքն մեծամասնութեան):

Իս բանւորական կուսակցութիւն է, այսինքն այդ կուսակցութիւնը բանւորների օգուտն է պաշտպանում:

Եթէ դու վերցնես այդ կուսակցութեան ծրագիրը, կամ այդ կուսակցութեան հրատարակած գաղէթը, կամ գիրքը բոլորի վրայ կրգտնես հետևեալ խօսքերը՝ «պրոլետարներ (այսինքն չունևորներ, բանւորներ) բոլոր երկրներն, միացէք»: Եւ իրաւ որ այդ կուսակցութիւնը բոլոր բանւորների, բոլոր չունևորների կուսակցութիւնն է, այսինքն բանւորներն, հողագուրկ ու հող քիչ ունեցող կամ մշակութիւն անող գիւղացիներն կուսակցութիւնն է:

Այդպիսի կուսակցութիւններ կան բոլոր երկրներում—Անգլիայում, Փրանսիայում, Իերմանիայում, Ամերիկայում, Եսպանիայում մի խօսքով բոլոր երկրներում. և բոլոր այդ կուսակցութիւնների գրոշակի վրայ գրւած է պրոլետարներ (այսինքն չունևորներ, բանւորներ) բոլոր երկրների միացէք:

Եւ բոլոր երկրներում բանւորներն ու չունևորները միանում են, մտնում են այդ կուսակցութեան մէջ և յետոյ այդ կուսակցութեան դանադան երկրներում դանւող ճիւղերը միանում են ու կազմում մի հսկայական միութիւն, որի անունն է Ինտերնացիոնալ այսինքն բոլոր բանւորների և չքաւոր գիւղացիների, չունևորների կամ ուրիշ խօսքով պրոլետարների միջազգային միութիւն:

Հիմա տեսնենք թէ ինչի՞ համար են դրանք միանում և ինչ է այդ համաշխարհային կուսակցութեան նպատակը:

Իսկ զիտէք, որ կան աշխարհում աղնւական հողատէրեր, կան վաճառական փողատէրեր, Փարիկանաներ, դաւօղատէրեր, և կան դիւղացիներ ու բանւորներ:

Ինչպէս զիտէք, աշխարհում տիրողը հողատէր ու փողատէր աղաներն են, մի խօսքով արևևոները, Իրանը են աշխարհի բարիքներ վայելողները, դրանք են աշխարհի հրամայողներն ու տէրերը:

Իսկ ո՞վ է աշխարհում ճնշւած, նեղւած, կեղեքւած, ամեն բարիքից զրկւած, ուրիշի դուանք ետիր, ուրիշի կամքին գերի. ո՞վ է որ բանաստեղծ Իսահակեանի ասածի նման «Իսոր դատում է դատարկ նստում», այսինքն մի կուշտ փորով հացի էլ չի տիրանում:

Իսկ զիտես, ընթերցող, թէ ով է դա, դու այդ լաւ զիտես. դա՛ սակաւահող ու հողագուրկ գիւղացին է, դա Ֆաբրիկայում ու զաւօղներում, նաւթահորերում ու հանքերում աշխատող բանւորն է: Մի խօսքով չունևորները, պրոլետարները: Ծիշտ է գիւղացիներ բոլորը չունևորներ, պրոլետարներ չեն, կան գիւղացիների մէջ կեղեքիչ վաշխաւուներ, զորքա բռուկներ, աղքատ հարևանի արիւնքտինքը ծծող ունևոր գիւղացիներ. բայց եթէ չորս բոլորը լաւ նայես, կրտեսնես որ այդպիսի բռուկը գիւղացիները գիւղերում փոքրամասնութիւն են կազմում, իսկ մեծամասնութիւնը զիւղում էլ քաղաքում էլ չունևորն է, պրոլետարը: Ահա այդ չունևորների—բանւորների և չունևոր գիւղացիների կուսակցութիւնն է, նրանց միութիւնն է բոլշևիկները կոմմունիստական կուսակցութիւնը, որի ամենաաղնիւ ու ամենազլխաւոր առաջնորդներից մէկն է Լենինը, դրա համար էլ շատերը բոլշևիկներին Լենինականներ են անւանում:

Իսկ տարուց աւել է, որ կայ այդ կուսակցութիւնը: Բանւորներն ու աղքատ գիւղացիները մտնում են այդ կուսակցութեան մէջ, որպէսզի միանան ու միացած ոյժերով

պաշտպանեն չունևոր դասակարգերի շահերը. իսկ չունևոր-  
 ների կամ պրոլետարիատի շահեր պաշտպանողը պիտի կու-  
 ունևորների կամ կապիտալիստների դէմ: Ուրեմն չու-  
 նևորները՝ բանւորն ու զիւզացին միանում են, որ  
 կուեն իրանց կեղեքող ու ճնշող ունևորների փողատէրերի  
 և հողատէրերի դէմ: Չունևորները միանալով, բոլշևիկ-  
 ների սոցիալ-դեմոկրատական կուսակցութեան մէջ են մըտ-  
 նում, որպէսզի տապալեն վերջապէս ժողովրդի կեղեքիչները  
 ու բռնաւորների իշխանութիւնն ու աշխարհում արդարու-  
 թիւն հաստատեն:

Բանւորների ու չքաւոր զիւզացիների կուսակցութեան  
 անդամները կոմմունիստ են, այսինքն ուղում են, որ աշխա-  
 տանքի գործիքները—մեքենաները, Փարրիկաներն ու զաւօդ-  
 ները և բոլոր հողը ընդհանուրի սեփականութիւն լինի, այ-  
 սինքն համայնական լինի և ոչ թէ առանձին մարդկանց սե-  
 փականութիւն:

Կոմմունիստներն ուղում են, որ ունևորները, որոնք աշ-  
 խարհում փոքրամասնութիւն են կազմում այլևս չիշխեն, չը-  
 հարստահարեն չկեղեքեն աշխատաւոր բանւորներին ու չու-  
 նևոր զիւզացիներին, որոնք աշխարհում մեծամասնութիւն  
 են կազմում:

Կոմմունիստներն ուղում են, որ իշխանութիւնն այդ  
 մեծամասնութեան ձեռքն անցնի, այսինքն բանւորների ու  
 զիւզացիների ձեռքն անցնի, որպէսզի նրանք այնպիսի կար-  
 դեր հաստատեն աշխարհում, երբ մարդը մարդու արիւն չը  
 թափի, երբ մարդը մարդու ճորտը չը լինի, երբ ոչ թէ մէկը  
 կաշխատի ու կիսաքաղց կրնաի, իսկ միւսը պարտաւսարապ  
 ման կը գայ ու կը վայելէ աշխարհի բոլոր բարիքները, այլ  
 ընդհակառակն երբ բոլորը կաշխատեն և բոլորն էլ կը վայելեն  
 իրանց աշխատանքի պտուղը. երբ չի լինի ճնշող, ու ճնշ-  
 ւող, աղա ու ճորտ, երբ մարդիկ բոլորը ազատ ու հաւա-  
 սար կը լինեն:

Բայց այսպիսի կարգերը ձեռնառու կլինին ճնշւած դա-  
 սակարգերի համար՝ բանւորների ու չունևոր զիւզացիների  
 համար: Արի անսնենք աղա-հողատէրն ու աղա-փողատէրն էլ  
 կուզենան, որ աշխարհում այդպիսի կարգեր հաստատուեն Ի-  
 հարկէ ոչ:

Ահա թէ ինչու երբ բանւորներն ու զիւզացիները  
 միանում ու իրանց կուսակցութիւնն են կազմում, հողատէ-  
 րերն ու փողատէրերը նոյնպէս սիսում են միանալ, նրանք էլ  
 ուղում են իրանց կուսակցութիւնն ունենալ, որպէսզի իշ-  
 խանութիւնն իրանց ձեռքում պահեն, որպէսզի չթողնեն, որ  
 կոմմունիստներն այս կարգերը փոխեն, որպէսզի հողք նորից  
 հողատիրոջ, այսինքն պամէշիկների ձեռքում մնայ, իսկ փո-  
 դը՝ փողատիրոջ կամ կապիտալիստի ձեռքում:

Բայց նրանք իրանց կուսակցութեան անունը «հողա-  
 տէրերի ու փողատէրերի, ազաների ու կնեազների» կուսակ-  
 ցութիւն չեն դնում: Նրանք ուրիշ խելք են բանեցնում,  
 նրանք խորամանկութեամբ ուզում են զիւզացիների ու բան-  
 ւորների գլուխը իւղել, նրանց խաբել և դրա համար իրանց  
 կուսակցութեան անունը դնում են «Ժողովրդական Ազատու-  
 թեան կուսակցութիւն» կամ «Ազգային կուսակցութիւն».  
 Իբր թէ իրենք ժողովրդի օգուան են ուղում պաշտպանել: Ահա  
 այդ կեղեքիչներն աղա-հողատէրերի և աղա-փողատէրերի  
 կուսակցութեան շատ յարմար կը լինի ասել, «Դրսից քահանայ  
 է ներսից սատանայ»: Ո՞վ է տեսել, սասցէք, որ դաչը գա-  
 ուի շահը պաշտպանէ: Իսկ հողատէրերն իրանց կուսակցու-  
 թեան անունը «Ժողովրդական ազատութեան կուսակցու-  
 թիւն» են դրել, այն ինչ նրանց կուսակցութեան անունը «ժո-  
 ղովրդին կեղեքող», «ժողովրդին նորասցնող» «ժողովրդի  
 դաւաճան» կուսակցութիւն պիտի լինի: Նրանք աղդի անու-  
 նից են խօսում, որպէսզի ժողովրդին աւելի լաւ թալանեն ու  
 ճնշեն, աւելի լաւ կեղեքեն ու նեղեն: Բայց սաի ճամբան  
 կտրծ է: Դիտակից բանւորներն ու զիւզացիներն այդ ծու-

դուր չեն ընկնի. նրանք զիտեն, որ գալլը գառան մորթի հագած էլի նոյն գալլն է. նրանք զիտեն որ հողատիրոջ ու գիւղացու շահերը իրար հակառակ են, —ինչ որ օգուտ է աղա- հողատիրոջը կամ պամէշչիկին, այն վնաս է գիւղացուն. ինչ որ օգուտ է փողատէր աղա-Ֆարքիկանտին, այն վնաս է բան-ւորին: Իրա համար բանւորն ու գիւղացին պիտի հուեն հողատէր ու փողատէր աղաների դէմ: Մարդիկ մէկ-մէկ որ դուրս գան ոչ չ չունեն, բայց ճշմարիտ է աւաճ, թէ—գեղ կանգնի գերան կը կտարի: Եւ այդպէս միանում են բանւոր-ներն ու չունեւոր գիւղացիները, մանում են իրանց օգուտը պաշտպանող կուսակցութեան՝ կոմմունիստներին, բոլշևիկներին կուսակցութեան մէջ, որ միացած ոչ ժերով խորատկեն տիրող անարդար կարգերն ու նոր և արդար կարգեր հաստատեն.

II

Երբ որ չեղափոխական բանւորներն ու զինւորները, այսինքն գիւղացիները (չէ՞ որ զինւորներ բոլորը կամ բանւորի տղայ են կամ գիւղացու) միացան և միացած ոչ ժով բռնակալ Նիկոլային թախտից իջեցրին, նոր ժամանակաւոր հառափարութիւն հաստատուեց: Այդ հառափարութեան անու- նը ժամանակաւոր հառափարութիւն գրին, որովհետեւ ժողովուրդն ուզում էր, որ իրան խիական բարեկամ մարդ- կանց ընտրէ, ուղարկէ Պետերբուրգ և նրանք այնտեղ իս- կական ժողովրդական հառափարութիւն հաստատեն. բայց որպէսզի երկիրը անտէր չմնայ, ժողովուրդը թող աւեց որ հառափարութեան մէջ ժամանակաւոր կերպով մնան այն մարդիկ, որոնք չեղափոխութեան խառն ու շփոթ օրե- րում իշխանութիւնն իրանց ձեռքն էին առել: Իրանց մէջ ամեն դասակարգից էլ մարդ կար, բայց դրանց մեծ մասը հողատէր և փողատէր դասակարգից էին: Սկզբում նրանց մէջ միայն մի հողի կար՝ դա Կերենսկին էր, որ իրան սոցիա-

լիստ էր անւանում, բայց վերջ դա էլ հարուստների պաշտ- պան դուրս եկաւ, զրա համար էլ նրա սոցիալիստ լինելուն հիմա ոչ ոք չի հաւատում: Այդ ժամանակաւոր հառափարու- թիւնը պարտաւոր էր իսկոյն և եթ հրատարակել, որ բոլոր պամէշչիկներին, աղաներին հողերը պիտի առնեն և դառնան ընդհանուրի սեփականութիւն: Բայց մարդս ինքն իրա թշ- նամին չէ՞ ժամանակաւոր հառափարութեան մէջ նստածները հողատէրերի և փողատէրերի մարդիկն էին, նրանց ձեռքն էր անցել իշխանութիւնը և նրանք չէին ուզում հրա- տարակել այդ օրէնքը: Բայց որովհետեւ զիտէին, որ եթէ շի- տակ ու բաց աւեն, որ չեն ուզում հողատէրերից հողը խլել և տալ գիւղացիներին այն ժամանակ գիւղացիք ոտքի կհանդ- նեն ու իրանց էլ Նիկոլայի օրը կը դրեն, զրա համար ժամա- նակաւոր հառափարութեան մէջ նստած հողատէր ու փողա- տէր միւնիստներն ուրիշ խելք մտածեցին, որպէսզի ժողովրդ- դին խարխուրեն, մինչև որ իրանց տեղն ամրացնեն, իսկ յետոյ իրանց բանը տեսնեն:

Տեսնենք, թէ ինչ խորամանկութիւն են մտածել այդ միւնիստները ժողովրդի դուրսը իւղելու համար:—«Մենք ժա- մանակաւոր հառափարութիւն ենք, ասում էին նրանք, իհար- կէ մենք էլ զիտենք, որ հողը պէտք է հողատէրերից խլել ու գիւղացիներին տալ, բայց դա մեր իրաւունքից վեր բան է, սպասեցէք, մի երկու երեք ամիս էլ սպասեցէք, կհաւա- քենք ժողովրդի բնորոշ մարդկանց, չիմնապիւր ժողով կկազ- մենք և այդ ժողովը կվճռէ հարցը և հողը գիւղացիներին կտայ»: Բոլշևիկ-կոմմունիստները շատ լաւ զիտէին, թէ ին- չ՞ու են հողատէր և փողատէր միւնիստները հողի հարցի վճիռը չետաձգում: Լենինն ու «լենինսկանները» զիտէին, որ Կերենսկին և հողատէր ու փողատէր միւնիստները ժամա- նակաւոր հառափարութեան մէջ են մտել և ուզում են ժո- ղովրդի թիւից բռնած ման ածել, զրա համար բոլշևիկներն սկսեցին պահանջել ժամանակաւոր հառափարութիւնից, որ

անմիջապէս կարգադրութիւն անէ և պամէշչիկներէ հոգերը տալ զիւղացիներին առանց չիմնադիր ժողովին սպասելու: Բայց հէնց որ հողի մասին խօսք էր բացուում, ժամանակաւոր կառավարութիւնը խօսքը կտուրն էր բցում կամ նորից իր երդը եքզում—սպասեցէ՛ք, չիմնադիր ժողով կը դումարի և այդ ժողովը կը վճռէ խնդիրը—ուրիշ խօսքով՝ «ճամբերի՛ր ձի», դարուն կուզայ եօնչա կը բուսնի»: Եւ այդպէս խարխրելով ժամակաւոր կառավարութիւնը չէր ուզում հողատերերի շահին դիպչել: Նրանցից հողը խել ու դիւզացիներին տալ և ոչ էլ չիմնադիր ժողով էր դումարում:

Բոլշևիկներէ կուսակցութիւնն սկսեց հասկացնել ժողովրդին, որ այդ ժամանակաւոր կառավարութիւնը ժողովրդին խարուծ է և ոչ պատերազմն է ուզում վերջացնել, ոչ էլ ժողովրդին հող տալ: Բոլշևիկներն ասում էին ժողովրդին՝ թէ խելք ունեո գլխիդ տարր դու ինքը պիտի տեսնես, թէ չէ այս հողատէր ու փողատէր մինիստրները ոչ պատերազմին վերջ կտան, ոչ էլ բեզ հւղ կտան: Ժողովուրդն սկսեց հասկանալ բանն ինչու՞ն է: Ժամանակաւոր կառավարութիւնը տեսաւ, որ իր խորամանկութիւնը բացուած է, նոր խորամանկութիւն մտածեց:—Լաւ, ասաց ժամանակաւոր կառավարութիւնը, քանի որ դուք մեզ փողատէր (կամ բուրժուա) մինիստրներիս չէք հաւատում, բերէք իշխանութիւնը կիսենք: մենք կը կանչենք մինիստր մի քանի հողի էլ ձեր սոցիալիստներէից, թող մինիստրների մի մասը սոցիալիստ լինի, մի մասը՝ փողատէր ու հողատէր: Եւ իրանց ուղած կիսատ սոցիալիստներէից վեց հողի էլ ժամանակաւոր կառավարութեան մէջ առան, որ ժողովրդի աչքը նրանով քօռացնեն: Բայց այդ վեց նոր մինիստրներն այն տեսակի սոցիալիստներէից էին, որոնք ուզում են դալլին ու դառին հաշտեցնել ու համաձայնեցնել, ուզում են ազալին ու ճարտին միացնել: Դա անհնար բան է, ընթերցող, և իսկական սոցիալիստը այդպիսի բան չի մտածի, որովհետեւ զիտէ, որ ոչ զայն ու դառը կըհաշտեն,

ոչ ջուրն ու կրակը: Իսկական սոցիալիստը զիտէ, որ չի կարելի ջուր ու կրակ իրար խառնել—կամ կրակը կմարի, կամ ջուրը կը չորանայ: Նրանք զիտեն, որ կամ դառը պիտի սաղ մնայ կամ դալլը քաղցած—ուրիշ կերպ չի լինի: Իսկ նոր մինիստրները, որ իրանց սոցիալիստ էին անւանում, ուզում էին անհաշտելին հաշտեցնել. բայց վերջը հողատէր և փողատէր մինիստրներէ խելքին չարմարեցին ու նրանց կամակատարը դարձան:

Կոմմունիստները զիտեն, որ անհաշտելին չեն կարող հաշտեցնել և չեն ուզում հաշտեցնել, զրա համար հարցը զնուծ են պարզ, շիտակ ու կարուկ:

—Բոլոր հողը, պէտք է բոլոր ժողովրդին լինի, ասում է Լենինը: Նողատէր-ազաններն Ռուսաստանում երեսուն հազար հողի են—խել նրանց ձեռքում եօթանասուն միլլիոն դեսեատին հող կայ: Եթէ այդ եօթանասուն միլլիոնը հաւասար բաժանելու լինինք երեսուն հազար հողատիրոջ վրայ, ամեն մի Նողատիրոջը երկու հազար դեսեատինից աւել կընկնի: Իսկ զիւղացիք Ռուսաստանում մօտ տասը միլլիոն տուն են և իրանց ձեռքում ունին նոյնպէս եօթանասուն միլլիոն դեսեատին հող: Եթէ զիւղացիներէ ունեցած հողն էլ հաւասար բաժանելու լինինք, ամեն մի տանը եօթը դեսեատին կընկնի: Սչսինքն մէկը երկու հազար դեսեատինից աւելի հող ունի, իսկ միւսը տնով եօթը դեսեատին: Եւ չնայած այդ աշխարայ, բացարձակ անարդարութեան, երբ որ մենք, բոլշևիկ-կոմմունիստներս ասում ենք, որ զիւղացիք իսկոյն պիտի խլեն հողատէր-ազաներէից հողը, կան մարդիկ, որ ասում են:—Ի՞նչպէս, մի՞թէ կարելի է զաւթել հողատէրերէ հողը, չէ՞ որ դա կամայականութիւն, անիրաւութիւն կը լինի և զօրբայութիւն: Ոչ, ասում ենք մենք, զօրբայութիւնը դա չի լինի, այլ զօրբայութիւնն այն է, երբ հողատէր-ազանները, որ թուով զիւղացիներէից հազար անգամ քիչ են և չնայած զրան զօրբայութիւնով տիրել են բոլոր

հողերն ու քէժ են քաշում, իսկ զիւղացիք իրենց մի կտոր հողը փորփրելով ու շան չարչարանք քաշելով մի փոք հացի տէր չեն դառնում: Մինխտորներն ասում էին՝ «Թող զիւղացիք համաձայնութեան զան հողատէր-ազաների հետ, մի բան վնարեն ու եօլա զնան և ոչ թէ խլին, գաւթեն հողը»:

Բայց դա, պատասխանում է Լենինը, արդար բան չի լինի, որ զիւղացիք նորից փող վնարեն հողատէր-ազաներին, որոնք զարեբով, սերնդէ սերունդ օգտել են իրենց բռնութեամբ գաւթած հողից և բացի այդ եթէ մի բոպէ թօյլ ասնք, որ բոլոր հողատէրերը համաձայն են որոշ վնարով իրենց հողը զիւղացոց տալ, այն ժամանակ էլ, չէ՞ որ հողատէր-ազան աւելի շուտ ունենաւ հարուստ զիւղացուն կրտայ իր հողը, որովհետև հարուստ զիւղացին նրան աւելի շատ փող կարող է տալ և հողատէրն էլ աւելի շուտ հարուստ զիւղացուն կը հաւատայ, քան թէ չունենա, աղքատ, մշակ-զիւղացուն: Եւ այդ գէպքում աղքատ, չունենա զիւղացին զբիւրացուն: Այ, դա չունենա որ զիւղացիներին ձեռնառու չէ: Բայց հողատէրը, իրեն որ մնայ, կարող է փողով էլ շատ իր հողը, կարող է իսկի համաձայնութեան չգայ. եթէ բանը եօլա զնալու կամ համաձայնութեան գալուն հասնի: Այ, դա զիւղացիներին ձեռնառու չէ: Դրա համար կոմունիստներն ասում են, որ զիւղացիք պէտք է իսկոյն խլեն հողատէրերից հողը և օգտուեն: Բայց երբ մենք ասում ենք, որ զիւղացիք պիտի իսկոյն գաւթեն հողատէր-ազաների հողը, դա չի նշանակում, թէ ով ինչքան գաւթէ իրեն կլինի, կամ ով որ այդ հողից օգտուի չափաւան սեփականատէր կրդառնայ այդ հողին: Այ, մենք ասում ենք՝ պէտք է չափաւարարել որ հողը խլում է հողատէր-ազաներից և դառնում բոլորի սեփականութիւն, իսկ ով որ, հողը վերցնում է, դա միննոյն է թէ, ընդհանուր ժողովրդից ժամանակաւոր վերցնում է հողը, մինչև որ ժողովուրդ ինքը կարգ կրհաստատէ հողի մասին: Բացի այդ, մենք չենք ասում, որ զիւղացիք

«խլի-խլի» անեն հողը, ով ինչքան կարողանայ խլէ. ո՛չ, մենք ասում ենք, որ զիւղացիք պիտի կազմակերպւած, կանոնաւոր կերպով գաւթեն հողատէրերի հողը:

Եթէ բանը մայ կամաւոր համաձայնութեան, հողատէր-ազան այն զիւղացուց, որին հողն օղի նման անհրաժեշտ է, կը վերցնէ իր ուղածին չափ արենդ և զիւղացին ուղենայչուղենայ պիտի հողատէր-ազայի ուղածը կատարէ և դա կլինի ոչ թէ կամաւոր համաձայնութիւն, այլ զիւղացու համար դա կլինի սկաւմայ, նարահատեայ, ստիպեայ համաձայնութիւն: Ահա թէ ինչու ոչ մի համաձայնութեան մասին խօսել չի կարելի, այլ առանց սպասելու պէտք է խլել հողը հողատէր-ազաներից ու ընդհանուր ժողովրդի սեփականութիւն չափաւարարել:

Կան մարդիկ, որ ասում են՝ լաւ, այսքան տարիներ, այսքան դարեր զիւղացիք համբերել են ու տարել աղաների հողատիրութիւնը, մի՞թէ չեն կարող մի քանի ամիս էլ սպասել մինչև որ չիմնադիր ժողով դուժարւի և այն ժողովը վրձուէ հարցը:

Ճիշտ է, պատասխանում են մեծամասնական սոցիալ-դեմոկրատները, ժողովուրդը շատ երկար է սպասել ու համբերել, լաւ կը լինէր եթէ նա չընթերէր ու չսպասէր, բայց երբ լեղափոխութիւնը կատարուելուց յետոյ իշխանութիւնը արող դասակարգերի ձեռքն է անցել, այսինքն հողատէրերի և փողատէրերի ձեռքը, կարճ է ժողովուրդը հաւատալ, որ այդ հողատէր ու փողատէր ազա մինխտորներն իսկապէս կրտան մի օր հողը ժողովրդին:

Եւ զրա համար ով որ, ասում է սպասենք մինչև չիմնադիր ժողով, կամ ինքն է միամիտ կամ ժողովրդին է միամիտի աեղ զնում: Ահա թէ ինչու կոմունիստներն ասում են, չպէտք է սպասել չիմնադիր ժողովին, այլ աչժմ իսկ պէտք է հողը համայն ժողովրդի սեփականութիւն չափաւարարել ու տալ զիւղացիներին որ մշակեն:

Ոմանք էլ ասում են թէ, եթէ զիւղացիք հիմնկուց զաւթեն հողատէրերի հողերը, զինւորները Փրօնտից կրօսեսն փախչել, որովհետեւ կը մտածեն, թէ անկարգութիւն է սկսել, հողը կը բաժանուի ու իրենց փայ ու բաժին չի մնայ: Իս իհարկէ սխալ է, պատասխանում է Լենինը, սխալ է, որովհետեւ երբ հողը յայտարարուած է համայն ժողովրդի սեփականութիւն, զա չի նշանակում թէ ով ինչ հող որ ուզենայ կրտիրէ և այդ հողն իրեն կը մնայ: Ոչ, այդպէս չի լինի: Գիւղացիք կը վերցնեն հողը ոչ թէ իբրև իրենց սեփական հող, այլ իբրև համայն ժողովրդին, որ ժողովուրդը տալիս է նրանց օգուտը, մինչև որ ինք ժողովուրդը նոր կարգ հաստատէ հողի մասին:

Ոչ, զինւորներն իրենց հարեան զիւղացիներին աւելի շուտ կը հաւատան քան թէ հողատէր ազաներին:

Ընդհակառակը, եթէ հողը շարունակէ մնալ ադա-հողատէրերի ձեռքում, այն ժամանակ զինւորները պիտի յուզեն ու պիտի մտածեն, որ չեղափոխութիւն եղաւ, բայց էլի շարունակում է հողատէրերի հին անկարգութիւնը, էլի հողը ոչ թէ համայն ժողովրդին է, այլ ազաներին և զինւորներն ահա այդ ժամանակ կը կորցնեն իրանց հաւատը դէպի չեղափոխութիւնը:

Վերջապէս մեզ առարկում են, ասում է Լենինը, որ եթէ զիւղացիք անմիջապէս կազմակերպուած կերպով խլեն հողատէրերից հողը, հողի մշակութիւնը կը վատանայ, որովհետեւ զիւղացիք անպատրաստ են դեռ և շատ հող ունենալով վարն ու ցանքսը կը վատացնեն: Իսկ եթէ հողատիրոջ ձեռքում մնայ, նա իրա վարձած զիւղացոց կրստիպէ, որ լաւ վարեն ու ցանեն:

Բայց դա էլ սխալ ենթադրութիւն է, ասում է Լենինը, որովհետեւ թէև ճիշտ է, որ մեր զիւղացին դարերով հողատէրերի, ազաների ճորտն է եղել և զրա համար շատ չետ է

մնացել, բայց կարծել, թէ երբ զիւղացին հողատիրոջ համար է վարում ու ցանում աւելի լաւ կանէ այդ վար ու ցանքսը քան երբ իր համար է անում՝ սխալ է և ծիծաղելի: Ուրեմն դա էլ հողատէր-ազաների պաշտպանների խորամանկութիւններից մէկն է: Կարծես թէ հողի մշակութիւնը կը լաւանայ, եթէ զիւղացիք կամաւոր համաձայնութիւն կայացնեն հողատիրոջ հետ, այսինքն ոչ թէ ձրի խլեն հողը, այլ հողատիրոջ վնասը: Իսկ մենք կարծում ենք, որ ընդհակառակը, եթէ զիւղացին իրա համար ցանէ ու վարէ, այն ժամանակ ցանքս ու վարը կը լաւանայ: Եւ ուրիշ կերպ լինել չի կարող: Փողատէր ազաների օգտի համար (կապիտալիստների օգտի համար) սկսած պատերազմն աշխարհը քար ու քանդ է արել, այն օրըն է հասցրել, որ Ռուսաստանը, եթէ զիւղացիների անտեսութիւնը չլաւանայ, չի կարող փրկուի: Բայց հողատէր ազաների դարդն ու ցուր Ռուսաստանը չէ, այլ իրանց օգուտը, իրանց քսակը: Նրանք լաւ են հասկացել, որ հիմա էլ չեն կարող բռնեցրով իշխել ժողովրդի վրայ զրա համար սկսել են զանազան խորամանկութիւններ բանեցնել: Մէկ էլ տեսար երեկուց վաշխառուն ու կեղեքիչք, երեկուց ժողովրդի արիւն ծծողը այսօր իր կրծքին չեղափոխութեան կարմիր նշան է կայնում ու դռում ամեն տեղ — «Մենք չեղափոխական դեմոկրատիա ենք (այսինքն հասարակ ժողովուրդ) մենք, ամեն ինչ կանենք ժողովրդի համար, միայն թէ պէտք է սպասել, պէտք է համբերել»: Բայց ժողովուրդն այդ կեղծուորներին ու խարբերաններին չպիտի հաւատա, ժողովուրդը պիտի կազմակերպուի և ինքն իր դիւրի ճարր տեսնի: Բանւորն երն ու զիւղացին երբ պիտի միանան ամեն տեղ, մտնեն բաշխիկների կոմմունիստական կուսակցութեան մէջ, ընտրեն իրանց մարդկանց ու հողն էլ, իշխանութիւնն էլ իրանց ձեռքն առնեն:

III

Հիմա տեսնենք, թէ ինչպէս պիտի վճուի հողի հարցը, երբ բոլոր հողը բոլոր ժողովրդինը լինի և ազաների ծասնաւոր հողատիրութիւնը քննչանայ: Կոմմունիստներն, այսինքն բոլշևիկները ուղում են, որ Ռուսաստանում կոմմունիստական այսինքն համայնատիրական կարգ հաստատուի, հէնց զբա համար էլ նրանք կոմմունիստ են կոչուում, այսինքն համայնական սկզբունքի կողմնակից: Իսկ կոմմունիստական կարգ կը հաստատուի այն ժամանակ, երբ բոլոր իշխանութիւնը գիւղացիներին և բանւորներին ձեռքը կանցնի: Երբ բոլոր հողը բոլոր ժողովրդին դառնայ և երկրում համայնատիրական կարգեր լինեն, բնական ու հասկանալի է, որ տեղերում հողի հարցը կարգադրողն իրենք գիւղացիք պիտի լինեն, դա պարզ է և այդ մասին խօսելն աւելորդ է:

Բայց երբ հարց են տալիս մեզ թէ ինչպէս անել որ հողն աշխատաւորի ձեռքն անցնի, մենք կոմմունիստ-բոլշևիկներս ասում ենք—այժ, դա շատ կարևոր է, մեր կուսակցութեան նպատակն էլ հէնց աղքատ, չունեոր գիւղացու և բանւորի շահը պաշտպանելն է:

Ձէ՞ որ, եթէ բոլոր հողը բոլոր ժողովրդին լինի, դա դեռ չի նշանակի, որ հողն աշխատաւորի ձեռքը կանցնի: Մենք ուղում ենք, որ ազատ հողի վրայ ազատ լինի աշխատանքը, երբ որ բոլոր հողը պետութեանը կը լինի (այն պետութեան, որի մէջ իշխանութիւնը պիտի գիւղացիներին և բանւորներին ձեռքում լինի), երբ բնագծիշտ կնշուին հողատիրութեան հին ձևերը, երբ ամենմարդ կը կարողանայ պետութիւնից վերցնել առանց միջնորդների և հաւատար իրաւունքով իրեն պէտք եղած հողը, դա մեծ քայլ կլինի, ի հարկէ մեծ առաջադիմութիւն կլինի թաղաւորական ու հողատիրական կարգերի հետ համեմատած: Բայց դա դեռ չի

նշանակէ, որ բոլոր հողը տրոււմ է բոլոր աշխատաւորներին:

Այդպիսի կարգերում հողից օգտուել կարող են միայն նրանք, ով անասուն ունի, գիւղատնտեսական գործիքներ ունի, իսկ ամենաաղքատ գիւղացին, վարձկան մշակ գիւղացին այդպիսի կարգերում էլ հողից օգտուել չի կարող, չեն կարող իրենց սնտեսութիւնն ունենալ: Արպէսդի հողից կարողանան օգտուել ոչ միայն ունեւոր գիւղացիք այլ և ամենաչունեւորները, նոյնիսկ վարձկան մշակները, նրանք պիտի միանան և պահանջեն, որ խոշոր սնտեսութիւններ կազմակերպւին խոշոր հողատիրական կալւածքներում, որի վրայ հսկողութիւն պիտի ունենան նոյն սնտեսութեան մէջ աշխատող բանւոր-գիւղացիք, որի համար պիտի դործադրեն հողատեր-աղալից խլած գործիքներն ու մենք ենաները և սնտեսութիւնը պիտի կառավարւի գիտուն գիւղատնտեսի ցուցմունքներով:

Առանց հողի համայնական մշակման անհնար է այնպէս անել, որ հողն աշխատաւորի ձեռքն անցնի: Ժիշտ է, հեշտ բան չէ այդպիսի (գիւղատնտեսական բանւորների խորհրդի հսկողութեան տակ գտնուող) համայնական մշակութիւն մտցնել, մանաւանդ որ, մեր գիւղացիք քովոր են, որ ամեն մարդ իր մասնաւոր սնտեսութիւնն ունենայ: Եիշտ է դա գիւղացիների վրին չի կարելի փաթաթել վերևից կարգադրութիւն անելով, Եիշտ է մի անգամից չի կարող ոչնչանալ առանձին-առանձին սնտեսութիւն ունենալու սովորով, որովհետեւ դրա համար պէտք կլինի փող, պէտք կլինի չարմարել սնտեսութեան նոր ձևերին: Իհարկէ ոչ մի կուսակցութեան հնարած ձևեր չեն կարող մասնել կեանքի մէջ, եթէ ինք կարիքը չի ստիպում, որ մարդիկ բնորոշեն այդ նոր ձևերը: Կուսակցութիւնների խորհրդով չէ, որ միլիոնաւոր մարդիկ միանում են ու չեղափոխութիւն անում: Ո՛չ, դա կարիքն է ստիպում անել: Իսկ տըն-



տեսական ձևերի փոփոխումն աւելի մեծ յեղափոխութիւն կլինի, քան թէ այն յեղափոխութիւնը, որը Նիկոլային թողալից ցած գլորեց: կարիքն է, որ ստիպում է միլիոնաւոր մարդկանց փոխել կեանքի սովորական եղանակն ու ձևը:

Եւ անտեսական անելանելի դրութիւնն ստիպում է մարդկանց ելնել և մի բնութանուր զբոհով փշուր-փշուր անել ու խորտակել բոլոր հին պատնէշները, բոլոր հին կարգերն ու նոր կեանք ստեղծել: Եւ երբ մենք ասում ենք, թէ անհրաժեշտ է համայնական տնտեսութեան անցնել, նրա համար չենք ասում, որ մեր ծրագրում այդպէս է դրւած, նրա համար չենք ասում, որ կոմունիստ լինելով ուղղում ենք, որ դա լինի, այլ նրա համար, որ դիտենք ուրիշ էլք չկայ, դա է միակ էլքը: Մենք դիտել ենք Եւրոպայի կեանքը, մենք դիտենք, որ Եւրոպայում շատ յեղափոխութիւններ են եղել, որոնք դեմոկրատական հանրապետութիւններ են հաստատել, մենք դիտենք, որ Ամերիկայում 1865 թւին ճորտատէրերը յաղթւեցին և հարիւրաւոր միլիոն դեսեատին հող անցաւ ժողովրդի ձեռքը և չնայած դրան, ոչ մի տեղ կապիտալիզմը (այսինքն խոշոր փողատիրութեան իշխանութիւնը) այնքան ճնշող չէ, որքան այնտեղ: Եւ այդ դիտողութիւնն ու մեր կոմունիստական ուսմունքը բերել են մեզ այն եզրակացութեան, որ առանց հողի համայնական մշակման գիտուն գիւղատնտեսի ցուցմունքներով ու գիւղատնտեսական բանւոր-գիւղացիների հսկողութեան աակ, առանց նորագոյն մեքենաների դործադրութեան անհնար է ազատել տիրող կապիտալիստական կարգերի ճնշող լծից: Բայց միայն Եւրոպայի օրինակը չէ, ոչ էլ միայն մեր կոմունիստական ուսմունքը, որ ստիպում են մեզ այդպիսի եզրակացութեան դալու, այլ այն, որ Ռուսաստանում իսկ, մեր կարծիքով, կոչ այդ կարիքը, հասել է ժամը, որ փոխէ հին տնտեսական ձևը, և եթէ մենք շարունակենք մեր հին մասնաւոր տնտեսութիւնը—մեզ

փրկութիւն չկայ: Քանի դնում աւելի ու աւելի աճում է քայքայումը, որ հեռւանք է կապիտալիստական կարգերի (այսինքն խոշոր-փողատիրական կարգերի) և աւաղակային արիւնահեղ պատերազմի: Երեքի ընթացքն այդ է պահանջում—պէտք է համայնական տնտեսութեան ձևերին անցնել: Ուրիշ էլք չկայ:

Եթէ մենք չենք ուղղում կործանել ու քանդել, հարկաւոր է աշխատանքն ընդհանուր ու պարտագիր դարձնել: Այդ կարող է անել միայն ուժեղ ու հաստատ իշխանութիւնը և ոչ թէ չինովնիկները: Ուժեղ ու հաստատ իշխանութիւն կարող է լինել միայն և միմիայն գիւղացիական, բանւորական և գինւորական խորհուրդների իշխանութիւնը, որովհետեւ նա չենւած կը լինի բոլոր աշխատաւոր ժողովրդի վրայ: Միայն այդպիսի ժողովրդական իշխանութիւնը կարող կլինի մտցնել ընդհանուր պարտագիր աշխատանք և համայնական տնտեսութիւն:

Միայն այդպիսով բոլոր հողը, բոլոր աշխատաւորին կլինի Միայն այդպիսի իշխանութիւնը կարող է վերջ տալ արիւնահեղ պատերազմին, բուժել նրա հասցրած խոր վէրքերը: Միայն այդպիսի իշխանութիւնը կարող է վճռական քայլեր անել առանց խնայելու փողատէր ու հողատէր աղաներին և փրկել երկիրը: Միայն այդպիսի իշխանութիւնը կարող է ազատութիւն տալ ազգերին և արդար կարգեր հաստատել Ռուսաստանում:

Ահա թէ ինչ է ասում Լենինը: Ահա թէ ինչ է ասում մեծամասնականների (բոլշեւիկների) կոմունիստական կուռակցութիւնը: Ահա թէ ինչու հողատէր ու փողատէր աղաներն ասում են կոմունիստ-բոլշեւիկներին ու նրանց առաջնորդ Լենինին: Ահա թէ ինչու տեսնելով, որ ժողովուրդը նրանց հետ է անամօթ ու անխիղճ ստեր են հնարում նրանց մասին ազա հողատէրերն ու փողատէրերը, որպէսզի ժողովրդին

խարեն: Քայց զուր են հողատէր ու փողատէր աղաների և նրանց կամաւոր կամ ակամայ պաշտպանների, կեղծ ու կիսատ-սոցիալիստների շանքերը, որովհետեւ ժողովուրդը պարզ տեսնում է, որ միակ հաւատարիմ բարեկամը, իր շահերի շիտակ ու անվախ պաշտպանը մեծամասնական (բոլշևիկների) կամ մուսուլմանական կուսակցութիւնն է, որը կուր է չայտարարել բոլոր կեղեքիչներին, բոլոր հողատէր ու փողատէր աղաներին, ժողովրդի բոլոր կեղծ ու սուտ բարեկամներին, բոլոր գառան մորթ հագած գալչերին: Տիմա դուք զիտէք, թէ ով է պաշտպանում բոլոր բանւորներին և չունեոր գիւղացիներին, հիմա դուք զիտէք թէ ում հետ պիտի գնաք, որ ազատութիւն ու հող ձեռք բերէք: Տիմա դուք զիտէք, հայ գիւղացիներ, որ մեծամասնական (բոլշևիկ) կամ մուսուլմանների հետ միանալով՝ դուք միանում էք բոլոր երկրների պրոլետարների հետ, չունեորների, աշխատաւորների հետ, իսկ երբոր միանան բոլոր երկրների աշխատաւոր չունեոր գիւղացիներն ու բանւորները, դուք զիտէք, թէ որքան հզոր ու կարող կրչինի այլ միութիւնը, որովհետեւ չէ որ բոլոր մարդկութեան ճնշող մեծամասնութիւնը աշխատաւոր չունեոր գիւղացիներն ու բանւորներն են կազմում: Այս թէ ինչու պիտի միանաք ու ձեր ձայնը միացնէք այդ մեծաշխարհային բանւորական ու աշխատաւորական ձայնին — համաշխարհային ինտերնացիոնալին:



անի Կոմիտեի նախագահ Կրեակ, Հրատարակումը կատարվում է 1911 թ. 11 ամսին:

Կոմիտեի նախագահ Կրեակից (Բոլշևիկների) ծրագր. 1 ր. 50 Կ.

Ինտերնացիոնալի պլատֆորմին—գինը՝ 1 ր.

3) Ն. Լեւոն. «Բուլղարիայի բուլղարական և պորտուգալական դեմոկրատիայի մասին»—գինը՝ 50 կոպ.

4) «Հայաստանի Կոմունիստական Կուսակցության ներկայացուցիչի զննումը» III կոմունիստական Ինտերնացիոնալին—գինը՝ 60 կոպ.

5) «Կոմունիստական Ինտերնացիոնալի Մանիֆեստը ամբողջ աշխարհի պրոլետարիատին»—գինը՝ 1 ր.

6) Ն. Լեւոն. «Երրորդ Ինտերնացիոնալի տեղադրումը (Թեման մեջ)»—գինը՝ 1 ր.

7) Ն. Լեւոն. «Ի՞նչ պետք է լինի մեր կուսակցի էթեան սնունդը»—գինը՝ 50 կ.

8) ՊԼԵՆՈՒԿ, «Թալանի դատաւար»—գինը՝ 1 ր.

9) ՎԵՐՆԱԵՆ «Եմպիրիայից և Մեթոդիկ»—գինը՝ 3 ր.

10) Ջարմիր Աստղ—գինը՝ 50 Կ.

11) Ն. Լեւոն. «Բարդալիան կուսակցության ինտերնացիոնալի Բուսաստանում և պրոլետարիատի դերերը»—գինը՝ 2 ր. 50 Կ.

12) Ա.Լ.Ն.Ե.Մ. Լիբերտիս. «Սարգերս ու ճանճերը»—գինը՝ 75 կոպ.

13) Ն. ԱՆՏՈՆՈՎ. «Վարդա I. Լեւոնի XVI, Նիկոլայ II»—գինը՝ 1 ր.

14) Վ. Կերեմեյև. «Միջինասիայի ի՞նչպես են ծնունդ գրանցվում (Թեման տակ գանձող դեղատոմսեր)»—գինը՝ 3 ր.

15) Ե. Ա. ՊԵՏԵՐՍՎԻՍՍԿԻ. «Գրեյսիական կոմունիստների մասին»—գինը՝ 1 ր. 50 Կ.

16) Գ. ՀԱՅՎՈՒՄՆ. «Պրոլետարական յեղափոխությունը և Մեթոդիկի բուլղարականները»—գինը՝ 1 ր. 50 կոպ.

17) Գ. ՀԱՅՎՈՒՄՆ. «Արդյունաբերական ինդուստրիա և Կոմունիստները»—գինը՝ 1 ր. 50 կոպ.

18) Գ. ՀԱՅՎՈՒՄՆ. «Պրոլետարական Յեղափոխությունը և Մեթոդիկի Բուլղարականները»—գինը՝ 3 ր.

19) Գ. ՀԱՅՎՈՒՄՆ. «Արդյունաբերական ինդուստրիա և Կոմունիստները»—գինը՝ 1 ր. 50 Կ.

20) Ա. ԿԱՐԻՆՆԵՆ. «Կոմունիստական պրոլետարիատի պատմությունը»—Վազի Մ. մեղ և Արդյունաբերական—գինը՝ 2 ր.

21) «Կարմիր Աստղ» (երկրորդ հրատարակություն)—գինը՝ 50 կ.

Հայկական Գործերի Կոմիտեի նախագահի Հրատարակությունը կատարվում է 1911 թ. 11 ամսին

1) Ռ. Սոց. Ֆեդ. Խորհուրդների Հանրակուսակցության Սանճակագրությունը—գինը՝ 1 ր. 50 կ.

2) Ն. Լեւոն. «Սամակ Ամերիկեան բանուրներին»—գինը՝ 1 ր. 50 կ.

3) Ա. Քրիշտե. «Պրոլետարական պրոլետարիատ»—գինը՝ 2 ր.

4) Ա. ԿԱՐԻՆՆԵՆ. «Երկրորդ Կոմունիստների 5-րդ Համագումարին»—գինը՝ 1 ր.

5) ՆԵՐՇԵՎ. «Դեպքեր Բագուում, Հ. Յ. Կոչնակցությունը և Բագուի Խորհրդային Իշխանությունը»—գինը՝ 75 կ.

6) Ն. Լեւոն. «Վարդա Մարքս» (Համառոտ կենսագրությունը և մարքսիզմի շարադրությունը)—գինը՝ 1 ր. 50 կոպ.

7) ՆԵՐՇԵՎ. «Ռուսական Յեղափոխությունը և պրոլետարիատի ասպարեկան»—գինը՝ 1 ր.

8) Ն. ԲՈՒՆԻՆ. «Կոմունիստների ծրագրերը»—գինը՝ 3 ր.

9) Մ. ՊԵՏԵՐՍՎԻՍՍԿԻ. «Արդյունաբերական և իր դերը համաշխարհային պատերազմի մեջ»—գինը՝ 3 ր.

10) ՎԵՐՆԱԵՆ. I «Կոմունիստական Կուսակցության Ինտերնացիոնալի Գերմանիայում».

II. «Վարդա Լեբենի» (Լեբենիստի նկարագիր)—գինը՝ 1 ր.

11) «Խորհրդային Կուսակցության նորանախագահի կենսագրությունը»—գինը՝ 75 կ.

12) «Միջինասիայի աշխատանքային զարգացման նորանախագահի կենսագրությունը»—գինը՝ 2 ր.

13) Հ. ՅՈՎՍԵՖՅԱՆ. «Դեպքեր Բագուում և Կարմիր»—գինը՝ 75 կ.

14) Գ. ԱՎԵՆՍԿԻ, Ի. ԱՎԵՆՍԿԻ և Լ. ՏՐՈՒՄԻՆ. «Կ. Լեւոն» (Արդյունաբերական և Իշխանությունը)—գինը՝ 2 ր.

15) Կ. ՄԱՐՔՍ Ֆ. ԿՆՈՒՆ. «Կոմունիստական Մանիֆեստ»—Պրոլետարիատի Կատարական և Յեղափոխության անալիզի նկարագիր—գինը՝ 3 ր.

16) Գ. ԱՎԵՆՍԿԻ. «Տեղական և Կոմունիստական»—գինը՝ 50 կ.

17) ՎԵՐՆԱԵՆ. «Ի՞նչ պետք է լինի Խորհրդային Իշխանությունը և ի՞նչպես է նա կարգուրդը»—գինը՝ 2 ր.

18) «Պրոլետարական Մեծ Յեղափոխությունը»—գինը՝ 3 ր.

19) Ա. ՊԵՏԵՐՍՎԻՍՍԿԻ. «Ինչպես վարել Ժողովրդը»—գինը՝ 2 ր. 50 կ.

20) Կ. ԵՐԵՄԵՅԵՎ. «Սոցիալիստական Խորհրդ. Հանրապետություն»—գինը՝ 1 ր.

21) ԱՎԵՆՍԿԻ. «Ռուսական և Կարմիր»—գինը՝ 50 կ.

22) Ա. ԱՎԵՆՍԿԻ. «Հայ Կուսակցության նկարագիր»—(չի):

23) Ա. ՏԵՐՍՎԻՍՍԿԻ. «Ի՞նչ է ասում Լեւոնը գրեյսիականներին»—գինը՝ 1 ր. 25 կ.

24) ԲՈՒՆԻՆ. «Եմպիրիայից»—գինը՝ 2 ր.